ՊՈԵԶԻԱՅԻ ՏԵՐՅԱՆԱԿԱՆ ՕՐԸ

# ՆՐԱ ՊՈԵԶԻԱՆ ՄԻՇՏ ՄԵԶ ՀԵՏ Է

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Այս էլ 48-րդ անգամն է նշվում Տերյանական օրը իր հարազատ Գանձայում: Այն սկիզբ է առել անցյալ դարի 60-ական թվականների կեսերին, երբ շրջանային «Արշալույս» թերթի փոքրաթիվ աշխատակիցները եւ պոեզիայի սիրահարները, մեկ խոսք արած, եկան Գանձա, ուղիղ պոետի տուն-թանգարան: Մեր հավաքը գանձացիների հետաքրքրությունն էլ շարժեց: Խոսք ու զրույցը Տերյանի, նրա ստեղծագործությունների մասին էր, իսկ տարեց տեղաբնակներն իրենց հիշողություններն էին պատմում տերտերանց տոհմի մասին:



Այդ օրվա, այն է՝ 1967 թվականի հուլիսի նախավերջին կիրակիի օրվա հավաքը կարծես մի մեխ էր, որ խփվեց նպատակակետին: Համաձայնություն կայացվեց, որ Վարդավառն ու Տերյանին նվիրված միջոցառումը միատեղել, եւ ամեն տարի այդ օրը վերածել Պոեզիայի տերյանական օրվա:

...Սկսվում է դաշտահանդեսը:

- Ողջունում եմ բոլորիդ, բոլոր ներկաներիդ, տերյանական ջերմ սիրով, Տերյանի ծննդավայրում,- բացելով հանդեսը, ասում է շրջանի մշակույթի ու սպորտի ծառայության պետ, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ Ժորա Սնխչյանը: Թող հավերժի այսօրվա պոեզիայի հանդեսը: Ապա միջոցառման մասնակիցներին ողջույնի խոսք է հղում Վրաստանի գրողների միության քարտուղար, գրող, բանաստեղծ Թեմուր Չալաբաշվիլին եւ արժեւորում հայ-վրացական բարեկամական ամուր կապի ամրապնդումը:

- Մեզ բոլորիս Տերյանը հավաքել է այստեղ, հարգելի բարեկամներ, հավաքել, որպեսզի հարգանքի տուրք մատուցենք մեծ պոետին, որ լեգենդ է դարձել իր ծնունդով, մանկությունով, պատանեկությամբ ու երիտասարդությամբ, անգամ մահով,- իր ելույթում շեշտեց Երեւանի «Վահան Տերյան» մշակույթի կենտրոնի տնօրեն Առուշան Հակոբյանը:

ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, բանաստեղծ Տաճատ Վարդապետյանը չի կարող իր հուզմունքը թաքցնել ամբիոնից ու սրտանց, տերյանական տողերով ողջունում է հայրենակիցներին:

Այնուհետեւ ելույթ են ունենում «Լիտերատուրուլի Մեսխեթի» ամսագրի խմբագիր, ՎՀԳ տարածաշրջանային կազմակերպության ղեկավար Ավթանդիլ Բերիձեն, Հայաստանի գրողների պատվիրակության ղեկավար Ղուկաս Սիրունյանը, Վահան Տերյանի տուն-թանգարանի աշխատակցուհի, բանաստեղծ Նարինե Սիրականյանը, բանաստեղծուհի Նազելի Նաիրին: Հանդեսը ավելի գրավիչ դարձնելու համար ելույթներն ընդմիջվում են երգով, պարով ու ասմունքով: Ընդսմին, բեմից հանդես եկան գեղարվեստական յոթ խմբերի ներկայացուցիչներ:

Հանդեսին իրենց մասնակցությունն էին բերել Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Հենզել Մկոյանը եւ Սամվել Պետրոսյանը, Ախալքալաքիի սակրեբուլոյի նախագահ Համլետ Մովսիսյանը, Նինոծմինդայի մունիցիպալիտետի վարչության նախագահ Գագիկ Կարսլյանը, Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորներ Սամվել Ֆարմանյանը, Արման Սահակյանը, Հովհաննես Սահակյանը, Արծվիկ Մինասյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, թարգմանիչ Գիվի Շահնազարը, Թբիլիսիի բարերար, Համաշխարհային հայկական կոնգրեսի վարչության անդամ Ռաֆիկ Աղաջանյանը, «Հայարտան» համակարգող Լեւոն Չիդիլյանը, Վրաստանի հայ մտավորականների միության նախագահ Ենիկ Թադեւոսյանը, Վրաստանի հայ նկարիչների միության նախագահ Մերուժան Շահումյանը եւ ուրիշներ:

Բեմից հանդես եկան գեղարվեստական յոթ խմբերի համույթներ, այդ թվում՝ Երեւանի մշակույթի նախարարության «Նազանի» համույթը՝ գեղարվեստական ղեկավար, ՀՀ վաստակավոր արտիստ Արուս Գուլանյանի ղեկավարությամբ, Նինոծմինդայի մշակույթի կենտրոնի երգիչ-երգչուհիներն ու ասմունքողները, Նինոծմինդայի Ռաֆայել Ջավախ կրթա-մշակութային կենտրոնի սաները, Ծալկայի շրջանի Նարդեւան գյուղի պարային համույթները, Նինոծմինդայի մանկատան երգի-պարի խումբը:

Երեկոյանում է ամառային երկար օրը, ավարտվում է հանդեսը, բազմությունը ցրվում է, բայց տպավորությունը խորն է, մարդիկ հեռանում են, իրենց հետ տանելով անմահ պոետի երկերի թովչանքը, նրա շունչն ու ոգին:

***ՄԱՆՈՒԿ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ***

*Նինոծմինդայի շրջան*

*գ.Գանձա*

*Լուսանկարը՝ ԲՈՐԻՍ ԿԱՐՍԼՅԱՆԻ*

# ՏԵՐՅԱՆԱԿԱՆ ՕՐԸ ՈՂՋ ՎՐԱՍՏԱՆԻ ՏՈՆՆ Է



***Վահան Տերյանը ծնվել եւ մեծացել է այն սուրբ հողում, որտեղ դեռեւս երկու հազար տարի առաջ, քրիստոնեական հավատի քարոզչության նպատակով, խաղողի որթե խաչելիությունը ձեռքին մուտք գործեց Սուրբ Նինոն եւ առաջինն այստեղ քարոզեց քրիստոնեությունը եւ շուրջ երկու հազար տարի այս հավատին հավատարիմ են մնում երկու եղբայրական ազգերի՝ Հայոսի եւ Քարթլոսի սերունդները:***

Հավանաբար հիշում եք, մի քանի տասնյակ տարիներ առաջ մեծ քաղաքագետ, ներկայումս արժանահիշատակ Էդուարդ Շեւարդնաձեն, վրացիների ու հայերի եղբայրության մասին խոսելիս, հայտարարեց՝ մենք գալիս ենք երկվորյակ եղբայրներից եւ այդ եղբայրությանը ոչ մեկը չի կարող խանգարել:

Հենց դա է պատճառը, որ գրեթե կես դար մեծն բանաստեղծ Վահան Տերյանի ծննդավայրում նշվում է այս անմոռանալի տոնը, որը միանման հարազատ է մեր երկու բարեկամ ազգերի առօրյա կյանքին:

Մենք՝ վրացիներս, ձեզ հետ միասին հպարտանում ենք նրանով, որ այստեղ, վրաց հողում ծնվել ու մեծացել են բազում հայ գրողներ ու արժանավոր քաղաքացիներ, որոնք միանման բարձրացրին ինչպես Վրաստանի, այնպես էլ Հայաստանի համբավը: Դրա վառ վկայությունն է նաեւ Վահան Տերյանի պոեզիայի տոնը:

Ասում են, գրողը մարդու հոգու ճարտարապետն է եւ, իրոք, դա այդպես է: Եվ իրականում, գրականությունն է ժողովուրդների միջեւ բարեկամության կամուրջը, որը սահման չունի եւ բարեկամության նման կամուրջները ապագայում էլ ավելի կգցվեն, որպեսզի է՛լ ավելի մերձենանք, միանման ընկալենք միմյանց ցավն ու ուրախությունը:

Վահան Տերյանը հայկական քնարերգությունը կատարելագործեց եւ հարստացրեց նոր հնարավորություններով, նա բանաստեղծական քնարերգության անզուգական վարպետ է: Գիտենք, որ նրա ստեղծագործությունների վրա մեծ ազդեցություն են գործել ինչպես եվրոպական, այնպես էլ արեւելյան պոեզիան, դրա համար էլ նա բոլոր ժամանակների համար մնում է որպես արդի մեծ բանաստեղծ եւ ստեղծագործող:

Հանճարները իրենց գլուխգործոցներն ստեղծում են երիտասարդ տարիներին: Վահան Տերյանն էլ ապրեց ընդամենը 35 տարի եւ կարողացավ ստեղծել այնքան գլուխգործոցներ, որոնք կարող էին ստեղծել միայն հանճարները:

Այն, որ Վահան Տերյանի ստեղծագործությունները մոտ եւ հարազատ են վրաց մշակույթին ու գրականությանը, անտարակուսելի փաստ է: Չէ՞ որ մեծ բանաստեղծն իր առաջին գիրքը հրապարակեց այստեղ, Վրաստանի մայրաքաղաքում, ինչով միշտ հպարտանում էր: Իսկ նրա սեղծագործություններում վրաց-հայկական թեման այնքան խոր արմատներ ուներ, որ առանց դրա հաշվառման մեծ քնարերգուի ստեղծագործության մասին խոսելը, իմաստազրկվում է:

Հենց այդ պատճառով վրաց ճանաչված բոլոր բանաստեղծների թարգմանչական կենսագրությունում պատվավոր տեղերից մեկը զբաղեցնում է Վահան Տերյանից կատարած թարգմանությունները: Վահան Տերյանն ինքն էլ տաղանդավոր թարգմանիչ էր, որը ժամանակին ձեռնամուխ եղավ վրաց գրականության հանճարի՝ Շոթա Ռուսթավելու աշխատության թարգմանությանը, սակայն անժամանակ մահը թույլ չտվեց այն հասցնել ավարտին: Թեպետ թողեց հավիտենական անձեռակերտ ստեղծագործություն, որը հարազատ ու սիրելի է ինչպես ձեզ համար՝ իմ հայ բարեկամներ, այնպես էլ՝ վրացիներիս համար:

***ԱՎԹԱՆԴԻԼ ԲԵՐԻՁԵ***

***Վրաստանի գրողների միության Սամցխե-Ջավախեթիի բաժանմունքի նախագահ, «Լիտերատուրուլի Մեսխեթի» ամսագրի խմբագիր***

«ՎՐԱՍՏԱՆԻ» ՏԵՂԵԿԱՏՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

# ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

***Խմբագրության փոստով ստացվող նամակներում ընթերցողների մեծ մասը հետաքրքրվում է վճարովի եւ անվճար արձակուրդներին վերաբերող ու աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխությունների հարցերով:***



***Ինչպես տեղեկացրեց թերթի իրավաբանական հարցերով խորհրդատու ԻՐԻՆԵ ՂԼՈՆՏԻՆ,*** գործող աշխատանքային օրենսգրքի համաձայն, աշխատողի վճարովի արձակուրդը տարեկան կազմելու է առնվազն 24 աշխատանքային օր, իսկ չվճարվող արձակուրդը տարեկան սահմանված է 15 օրացուցային օր:

Գործնականում նման ձեւակերպում էր նաեւ մինչեւ 2013 թվականի հուլիսի 4-ը գործող օրենսգրքում: Թեպետ արձակուրդից օգտվելու բաժնում նոր օրենսգրքում կատարվել են նշանակալի փոփոխություններ: Եթե մինչեւ փոփոխությունների կատարումը օրենսգրքում ոչինչ չէր ասված չօգտագործված արձակուրդի վարձատրման մասին, ապա նոր օրենսգրքով, եթե աշխատանքային պայմանագիրը դադարեցվել է օրենսգրքի 33 հոդվածի առաջին կետի որոշ ենթակետերով նախատեսված հիմնավորմամբ, ապա գործատուն պարտավոր է աշխատողին վարձատրել չօգտագործված արձակուրդի համար: Հաջորդ նորամուծությունը վերաբերում է ծանր, առողջության համար վնասակար կամ վտանգավոր աշխատանքներում զբաղված աշխատողների լրացուցիչ վճարովի արձակուրդ շնորհելուն՝ տարեկան 10 օրացուցային օրվա չափով:

Ինչ վերաբերում է հղիության, ծննդաբերության եւ երեխայի խնամքի, ինչպես նաեւ նորածնին որդեգրելու ժամանակ արձակուրդին, կամ երեխային խնամելու համար լրացուցիչ արձակուրդի ստացման հարցին, ապա 2013 թվականի հուլիսի 4-ից այդ բաժնում փոփոխություններ չեն կատարվել, թեպետ Վրաստանի խորհրդարանն անցյալ տարվա սեպտեմբերի 27-ին ընդունեց փոփոխություններ, որոնք ուժի մեջ մտան 2014 թվականի հունվարի 1-ից: Փոփոխություններում նշված է. եթե մինչ այդ հղիության, ծննդաբերության եւ երեխային խնամելու համար տրվում էր 477 օրացուցային օրվա արձակուրդ, որից 126-ը վճարովի էր, իսկ ծննդաբերության բարդացումների կամ երկվորյակներ ունենալու դեպքում՝ 140 օրացուցային օր, ապա 2014 թվականի հունվարի 1-ից արձակուրդային օրվա տեւողությունը հասցված է 730 օրացուցային օրվա, որից հղիության. ծննդաբերության եւ երեխայի խնամքի համար նախատեսված արձակուրդային օրերից 183-ը դառնում է վճարովի, իսկ ծննդաբերության բարդացումների կամ երկվորյակների ծնվելու դեպքում՝ 200 օրացուցային օրվա:

Փոփոխություններ են կատարվել նաեւ նորածին երեխային որդեգրելու համար նախատեսված արձակուրդայինի ստացման ժամանակ: Մասնավորապես, գործող օրենսգրքի համաձայն, աշխատողին, որը որդեգրել է մինչեւ 2 տարեկան երեխայի, անձնական դիմումի հիման վրա տրվում է արձակուրդ՝ երեխայի ծնված օրվանից հաշված 365 օրացուցային օրվա չափով, եւ այդ արձակուրդից 70 օրացուցային օրը վճարովի է: 2014 թվականի հունվարի 1-ից գործող օրենսգրքով, նման աշխատողին տրվում է երեխայի ծնված օրվանից հաշված 550 օրացուցային օրվա արձակուրդ, որից 90 օրացուցային օրը վճարովի է:


Simple is the New Smart
LG G3
ՀԱՆՃԱՐԵՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՊԱՐԶՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ամեն ինչ հնարավոր է
QuadHD
Beyond Full HD
OIS+ LASER AF
KNOCKcode
Qualcomm snapdragon
GLOBAL MOBILE AWARDS 2014
LG
Life's Good

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ ԱՄՓՈՓԵՑ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԳՏՆՎԵԼՈՒ 100 ՕՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

*Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը, հուլիսի 22-ին ամփոփելով իր պաշտոնավարման 100 օրը, նշեց, որ այս ընթացքում կատարված աշխատանքի գնահատականը թողնում է ժողովրդին:*

«Ժողովուրդը պետք է ասի՝ արդարացան իր հույսերը, թե ոչ: Բայց ժողովուրդը պետք է հասկանա, որ մենք չունենք կախարդական փայտիկ, որ բոլոր խնդիրներին տանք լուծում: Մեր թիմը՝ նոր կառավարությունը, ամեն ինչ անում է, որ խնդիրներին լուծում տա: Իհարկե, ժամանակ է պետք եւ ֆինանսական ռեսուրսներ, բայց մենք հետեւողական ենք լինելու»,- նշեց վարչապետը: Հովիկ Աբրահամյանի խոսքով՝ ինքը տեսնում է դրական տեղաշարժեր: «Կոնկրետ հարցին՝ տալիս ենք լուծում: Բնակիչների բարձրացրած հարցերի նկատմամբ պատասխանատվություն ենք կրում եւ լուծում ենք տալիս՝ անկախ դրանից դա քաղաքացուն գոհացնում է, թե ոչ, մենք ճշմարտությունն ենք ասում»,- ընդգծեց կառավարության ղեկավարը: Վարչապետը նշեց, որ, չնայած այսօր առկա բազմաթիվ արտաքին ու ներքին խնդիրներին, կառավարությունը տեսնում է մեր երկրի պայծառ ապագան: «ՀՀ կառավարության թիմով անելու ենք ամեն ինչ, ջանք չենք խնայելու, որ խնդիրներն արագ ու որակով փորձենք լուծել»,- նշեց Հայաստանի վարչապետը: Հովիկ Աբրահամյանը ՀՀ վարչապետի պաշտոնը ստանձնել է ընթացիկ տարվա ապրիլի 13-ից:

## ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԱՆԴԱՄԱԿՑԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ ՄԵԿԻՑ



*Հայաստանը մինչեւ հոկտեմբեր կավարտի Եվրասիական տնտեսական միության անդամակցության շուրջ բանակցությունները եւ հաջորդ տարվա հունվարի 1-ից կանդամակցի միությանը: Այս մասին հայտարարեց Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը: «Մենք մինչեւ հոկտեմբերի վերջ կստորագրենք պայմանագիրը: Ես համոզված եմ, որ 2015 թվականի հունվարից արդեն լիովին կանդամակցենք Եվրասիական տնտեսական միությանը»,- ասաց վարչապետը:*

Պատասխանելով լրագրողների այն հարցին, թե ինչով է պայմանավորված գործընթացի ձգձգումը՝ վարչապետը նշեց, կան տեխնիկական հարցեր, որ արդեն վերացվել են, եւ խանգարող որեւէ հանգամանք չկա:

Հիշեցնենք, որ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը սեպտեմբերի 3-ին Մոսկվայում հայտարարել է Մաքսային միությանը միանալու վերաբերյալ Հայաստանի որոշման եւ այդ նպատակով անհրաժեշտ կատարելիք քայլերը ձեռնարկելու, իսկ հետագայում՝ Եվրասիական տնտեսական միության ձեւավորմանը մասնակցելու մասին: Դեկտեմբերի 24-ին Մոսկվայում տեղի ունեցավ ՄՄ անդամ պետությունների ղեկավարների հանդիպումը, որի ժամանակ ստորագրվեց նաեւ Հայաստանի՝ Մաքսային միությանն անդամակցելու համար նախատեսված ճանապարհային քարտեզը:

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԱՃԸ ԿԱԶՄԵԼ Է 3,4 ՏՈԿՈՍ

*Հայաստանի տնտեսական ակտիվությունը 2014-ի առաջին կիսամյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, 3,4 տոկոսի աճ է գրանցել:*

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությունը հրապարակել է երկրի սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ օպերատիվ ամփոփ տվյալները, որոնց համաձայն՝ հունվար-հունիս ամիսներին գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալն աճել է 1,4, իսկ առեւտրի շրջանառության ծավալը՝ 5,6 տոկոսով:

Նշված ժամանակահատվածում արդյունաբերական արտադրանքի ծավալը մնացել է անփոփոխ, իսկ դրանց գների ինդեքսը կազմել է 8,7 տոկոս: Շինարարության ծավալն ընթացիկ տարվա առաջին կեսին ավելացել է 0,4 տոկոսով, իսկ ծառայությունների ծավալը՝ 4 տոկոսով: Սպառողական գների ինդեքսը եւս գրանցել է 4 տոկոսի աճ, իսկ միջին անվանական աշխատավարձն ավելացել է 7,1 տոկոսով:



2014 թվականի հունվար-հունիս ամիսներին արտաքին առեւտրաշրջանառության աճը կազմել է 1 տոկոս, արտահանմանը՝ 0,8 տոկոս, իսկ ներմուծմանը՝ 1,1 տոկոս: Նշված ժամանակահատվածում նկատվել է միայն էլեկտրաէներգիայի արտադրության ծավալի կրճատում շուրջ 3,2 տոկոսով:

## ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆԵՐԿՐՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐՆ ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ



*Ավտոմեքենաների ներմուծման վիճակագրության մեջ հետաքրքիր միտում է նկատվում՝ Հայաստան են սկսել ներկրվել առավել էժան ավտոմեքենաներ: Եթե նախաճգնաժամային տարիներին Հայաստան էին ներմուծվում մեծամասամբ 5-10 հազար դոլար մաքսային արժեքով մեքենաներ, ապա այժմ գերակշռում են մինչեւ 5 հազար դոլար արժողությամբ մեքենաները:*

2014 թվականի առաջին կիսամյակում ներմուծված 25 հազար 92 ավտոմեքենաներից 15 հազար 710-ն ունեն մինչեւ 5000 դոլար մաքսային արժեք: 5-10 հազար դոլար արժողությամբ մեքենաների թիվը 5 հազար 838 է, իսկ 1442 ավտոմեքենա ունեն 10-15 հազար դոլար արժողություն: Առավել թանկարժեք՝ 15-30 հազար դոլար արժողությամբ մեքենաներից Հայաստան է ներմուծվել 1442 հատ, իսկ 30 հազար դոլարից ավել արժողությամբ՝ ընդամենը 660 ավտոմեքենա:

ՀՀ մաքսային ծառայության հրապարակած վիճակագրական տվյալների համաձայն՝ Հայաստան ներմուծված ավտոմեքենաների ծավալը 2014 թվականի առաջին կիսամյակում աճել է շուրջ 40,7 տոկոսով՝ կազմելով 25 հազար 92 ավտոմեքենա: Ներմուծված ավտոմեքենաներից 437-ը եղել են ռուսական արտադրության, որոնց համար մաքսային մարմինները գանձել են շուրջ 693 մլն դրամ: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ ռուսական ավտոմեքենաների ներմուծման ծավալը կրճատվել է 29,4 տոկոսով:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված՝ 2009 թվականին Հայաստան ներմուծված մեքենաների թիվը կտրուկ նվազել էր՝ կազմելով 17 հազար 269 մեքենա: 2009-2013 թվականների ընթացքում ավտոմեքենաների ներմուծման ծավալներն անընդմեջ աճել են: Ավտոմեքենաների ներկրման ծավալներն արդեն հասել են նախաճգնաժամային ցուցանիշին:

## ՓՈՓՈԽՎԵԼ Է ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՄԱՆ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ՍԱՆԴՂԱԿԸ

*Հուլիսի 26-ից ուժի մեջ կմտնեն Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի փոփոխությունները:*

Համաձայն Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի փոփոխությունների, եթե նախկինում սահմանված արագությունը 1-10 կմ/ժ գերազանցելու դեպքում տուգանքը կազմում էր ֆիքսված 10 հազար դրամ, ապա այսուհետ գերազանցված յուրաքանչյուր 1 կմ/ժ արագության համար վարորդը կվճարի 1000 դրամ: Իսկ 10-30 կմ/ժ գերազանցելու դեպքում կգանձվի 1500 դրամ:

Այսուհետեւ թեթեւ խախտումների դեպքում ոստիկանի կողմից նախատեսում է կատարել զուտ նկատողություն՝ ներառյալ տեսաձայնագրման տիրույթում գտնվելու դեպքում, ինչը քաղաքացուն ազատում է վարչական պատասխանատվությունից:

Եթե նախկինում վարորդը տուգանքը ժամանակին չվճարելու համար կենթարկվեր տույժի գրանցված տուգանքի եռապատիկի չափով, իսկ վաթսուն օր չվճարելու դեպքում տույժը հնգապատկվում էր: Այսուհետեւ այդ գումարները կազմում են, համապատասխանաբար, տուգանքի քսանհինգ եւ հիսուն տոկոսը:

## ՏՈՒԳԱՆՔ՝ ԱՌԱՆՑ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԵՔԵՆԱՆ ՎԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

*Առանց վարորդական վկայականի կամ այլ փաստաթղթերի տրանսպորտային միջոցներ վարելու համար վարորդները կտուգանվեն սահմանված նվազագույն աշխատավարձի եռապատիկի չափով՝ հնգապատիկի փոխարեն:*

Այս նոր կարգավորումն ամրագրվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի լրամշակված տարբերակում, որն ուժի մեջ է մտել հուլիսի 26-ից:

Տուգանք է սահմանվում նաեւ մեքենան վարելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաեւ ուժը կորցրած վարորդական վկայականով մեքենան վարելու դեպքում:

Իսկ մեկ տարվա ընթացքում, երրորդ եւ ավելի անգամ նույն իրավախախտման կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքների համար սահմանված տուգանքի եռապատիկի չափով:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ ԼԻՈՆՈՒՄ

***Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը, Ռոն-Ալպի պրեֆեկտ Ժան-Ֆրանսուա Կարենսոն, Լիոնի քաղաքապետ, սենատոր Ժերար Կոլոմբը, Ռոնի գլխավոր խորհրդի նախագահ Դանիել Շուզեվիլը հուլիսի 21-ին կատարել են Լիոնում Հայաստանի գլխավոր հյուպատոսության բացման հանդիսավոր արարողությունը: Միջոցառմանը ներկա են եղել Շառլ Ազնավուրը, Ֆրանսիայի խորհրդարանականներ, քաղաքական, հասարակական եւ մշակութային գործիչներ, հայ համայնքային կազմակերպությունների ղեկավարներ, լրատվամիջոցների բազմաթիվ ներկայացուցիչներ: Ելույթներից հետո Հայաստանի օրհներգի հնչյունների ներքո գլխավոր հյուպատոսության շենքի առջեւ բարձրացվել է Հայաստանի պետական դրոշը, այնուհետեւ Էդվարդ Նալբանդյանը, Շառլ Ազնավուրը, Ժան-Ֆրանսուա Կարենսոն, Ժերար Կոլոմբը, Դանիել Շուզեվիլը եւ Նիկոլայ Սարկիսովը կտրել են խորհրդանշական կարմիր ժապավենը:***

### ԻՆԸ ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐ՝ ԵՐԿՐԱՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ



***Հայաստանում երկրաջերմային էներգետիկայի զարգացումը հեռանկարային նշանակություն ունեցող ուղղություն է, որը կարող է էականորեն լուծել Հայաստանում էներգետիկ անվտանգության հարցը:***

***Դա միակ տեխնոլոգիան է, որով հնարավոր է ապահովել էլեկտրաէներգիայի երաշխավորված արտադրություն, քանի որ ե՛ւ արեւային, ե՛ւ հողմային, ե՛ւ վերականգնվող էլեկտրաէներգիայի ստացման մյուս աղբյուրներն ունեն սեզոնային բնույթ:***

***Ինչպես տեղեկացրեց Հայաստանի Վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամի տնօրեն Թամարա Բաբայանը, որ «Կլիմայի ներդրումային հիմնադրամ»-ից շուրջ 9 մլն դոլար դրամաշնորհ է տրամադրվել Հայաստանին, որը կուղղվի երկրաջերմային էներգետիկայի զարգացման հնարավորությունների ուսումնասիրմանը:***

***Հիմնադրամի տնօրենի խոսքով՝ երկրաջերմային էլեկտրակայաններն աշխատում են օրը 24 ժամ եւ տարին 365 օր, որը թույլ է տալիս էներգիայի մեծ արտադրություն իրականացնել:***

***Մասնագետի հավաստմամբ՝ համեմատաբար նոր հրաբխային պրոցեսների բուռն զարգացումների պատճառով Հայաստանը երկրաջերմային էներգիայի զարգացման հեռանկարային տարածքներից մեկն է համարվում: Հայաստանի երկրաջերմային պոտենցիալը ներկայում գնահատվում է մոտ 30 մեգավատ:***

### ԿԱՆՑԿԱՑՎԻ «ՎԱՐԴԱՎԱՌ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ



***Այս տարի հուլիսի 27-ին Գառնու տաճարի եւ Գեղարդի վանքի տարածքում առաջին անգամ տեղի կունենա Վարդավառի միջազգային երիտասարդական փառատոնը: Հայաստանը զբոսաշրջիկներին ավելի գրավիչ դարձնելու նպատակով այս փառատոնը կդառնա յուրօրինակ կամուրջ մեր ներկայի ու անցյալի միջեւ: Այս մասին ասաց փառատոնի մտահղացման հեղինակներից մեկը՝ Երիտասարդական ակումբների դաշնության նախագահ Արտոմ Մխիթարյանը:***

CyanMagentaYellowBlack



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՀՈՒԼԻՍ-ՕԳՈՍՏՈՍ

*26.07.2014. Հիշատակ հին տապանակի եւ նոր Սուրբ եկեղեցու տոն*



***27.07.2014. Վարդավառ: Պայծառակերպություն Տեառն մերոյ Յիսուս Քրիստոսի***

Հիսուս Քրիստոսի Պայծառակերպությունը Հայ Առաքելական եկեղեցու հինգ տաղավար տոներից է եւ Սուրբ Պետրոս, Սուրբ Հովհաննես եւ Սուրբ Հակոբոս առաքյալների առջեւ Քրիստոսի այլակերպության հիշատակն է, որն, ըստ ավանդության, տեղի է ունեցել Թաբոր լեռան վրա:

Հայ եկեղեցին Քրիստոսի Պայծառակերպությունը տոնը կոչում է նաեւ Այլակերպության տոն կամ Վարդավառ: Վերջինս հին հայկական տոնի անվանումն ունի, որից պահպանվել է նաեւ միմյանց վրա ջուր ցողելու սովորույթը: Պայծառակերպության տոնին հաջորդող երկուշաբթի օրը մեռելոց է:

***01.08.2014. Հիշատակ Սուրբ Աստվածածնի գոտու գյուտի***

Սուրբ Աստվածածնի գոտու գյուտը Տիրամորը նվիրված Հայ Առաքելական եկեղեցու յոթ տոներից է: Մի հանգամանք, որն ակնհայտ կերպով ցույց է տալիս Սուրբ Կույսի՝ հայ ժողովրդի հոգեւոր կյանքում ունեցած կարեւոր եւ նշանակալից տեղի ու դերի մասին: Նա, որպես մայրության եւ առաքինության կատարյալ օրինակ, դարեր ի վեր իր այդ հատկանիշներով կերտել ու ձեւավորել է հայ օրիորդի, կնոջ եւ մոր նկարագիրն ու դիմագիծը, միաժամանակ հրաշագործություններով այսօր էլ շարունակում է իր կենդանի ներկայությունն ու ներգործությունն ունենալ մեր կյանքում:

***02.08.2014. Սուրբ Թադեոս առաքյալի եւ Սուրբ Սանդուխտ կույսի հիշատակության օր***

ԵՐԳԻ ՓԱՌԱՏՈՆ

## «ՆՈՐ ԱԼԻՔ 2014»-Ի ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԱՋԱՏԱՐԸ ՆՈՒՑԱ ԲՈՒՉԱԼԱՁԵՆ Է



***Լատվիայի Յուրմալա քաղաքում մեկնարկեց «Նոր ալիք 2014» երգի փառատոնը: «Ջինտարի» համերգային դահլիճում անցկացվող փառատոնի մրցութային առաջին օրվա արդյունքներով, որտեղ նորացված եւ յուրահատուկ ձեւավորմամբ ներկայացվեցին համաշխարհային հիտերի ճանաչման արժանացած երգերը, մրցույթի առաջատարը 76 միավորով Վրաստանի ներկայացուցիչ Նուցա Բուզալաձեն է:***



Երկրորդ տեղին 73-ական միավորով հավակնում են երեք մասնակիցներ՝ ուկրաինացիներ Վիկտորիա Պետրիկը, Վյաչեսլավ Ռիբիկովն ու ղազախստանցի Ալիշեր Կարիմովը: Երրորդ տեղում, 72 միավորով Ռուսաստանը ներկայացնող Նոդար Ռեւիան է:

Հայաստանի ներկայացուցիչ Սոնա Ռուբենյանը, 67 միավորով 9-րդ տեղում է:

Նշենք, որ «Նոր ալիք 2014» երգի փառատոնի ժյուրիի կազմում են ճանաչված երգահաններ ու կատարողներ, որոնց թվում են Իգոր Նիկոլաեւը, Լեոնիդ Ագուտինը, Վալերի եւ Կոնստանտին Մելաձեները, Ֆիլիպ Կիրկորովը, Իգոր Կրուտոյը եւ ուրիշներ: Հատկանշական է, որ Լատվիայի ԱԳ նախարարությունը հրաժարվեց մուտքային այցեգրեր հանձնել ճանաչված կատարողներ Իոսիֆ Կոբզոնին, Օլեգ Գազմանովին եւ Վալերիային, նրանց ազգանունները ներառնելով այն մարդկանց ցուցակում, ում մուտքը Լատվիայի տարածք արգելված է: Որպես մերժման պատճառով նշված է, որ «տվյալ անձինք իրենց գործողություններով նպաստում են Ուկրաինայի ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության խախտմանը»:

## Black Sea Jazz Festival ՋԱԶ-ՓԱՌԱՏՈՆ ԲԱԹՈՒՄԻՈՒՄ

***Հուլիսի 24-ին Վրաստանի սեւծովյան ափի Բաթումի քաղաքում մեկնարկեց Black Sea Jazz Festival ավանդական ջազ-փառատոնը:***

Վիթխարի երաժշտական միջոցառումը, որը չորս օր անցկացվելու է Բաթումիի թենիսի խաղահրապարակներում, մեկնարկեց ԱՄՆ-ի KOOL AND THE GANG խմբի կատարմամբ: Միջոցառումը կազմակերպել է Վրաստանի մշակույթի նախարարությունը:

2008 թվականից Բաթումիի ջազ-փառատոնն ընդգրկված է Եվրոպայի ամենահեղինակավոր երաժշտական փառատոների ցուցակում: Այս տարի միջոցառմանը հրավիրված են՝ KOOL AND THE GANG-ը (USA), LIV WARFIELD feat-ը, The NPG Hornz-ը (USA), BOOTSY COLLINS & The Funk Unity Band-ը (USA), MARIO BIONDI-ն (IT), RAMON-ը (AT), MEN IN BRASS-ը (GER): Միաժամանակ, փառատոնի հովանու ներքո, Բաթումիի բուլվարի տարածքում հուլիսի 24-26-ին իր շոուն կներկայացնի MEN IN BRASS խումբը. եռօրյա համերգներն անվճար կլինեն Բաթումիի բնակիչների եւ հյուրերի համար:

ՍՊՈՐՏ ՍՊՈՐՏ ՍՊՈՐՏ

### ՆՈՐ ՎԱՐԿԱՆԻՇԸ՝ ԽԱՂԻ ՈՐԱԿԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ), աշխարհի ֆուտբոլի առաջնության ավարտից հետո, հրապարակել է ազգային հավաքականների վարկանիշային նոր սանդղակը:

Նախորդի համեմատությամբ իր դիրքերը պահպանել է Վրաստանի հավաքականը: Այն աղյուսակում 96-րդն է, իսկ Հայաստանի հավաքականը նահանջել է երեք տեղով ու հայտնվել 41-րդ հորիզոնականում: Նահանջել են նաեւ Ուկրաինայի եւ Ռուսաստանի հավաքականներն ու հանգրվանել՝ համապատասխանաբար 22 եւ 23-րդ տեղերում:

Աղյուսակը գլխավորում է աշխարհի նորընծա չեմպիոն Գերմանիայի հավաքականը, որին հաջորդում են Արգենտինայի ու Հոլանդիայի ընտրանիները:

Լավագույն տասնյակում են նաեւ, համապատասխանաբար, Կոլումբիայի, Բելգիայի, Ուրուգվայի, Բրազիլիայի, Իսպանիայի, Շվեյցարիայի եւ Ֆրանսիայի հավաքականները: Հատկանշական է, որ աշխարհի առաջնությունում ձախողվելուց հետո Իսպանիայի ընտրանին հայտնվել է 8-րդ հորիզոնականում:

### ԵՐԵՎԱՆԻ «ԱՐԱՐԱՏԸ» ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Երեւանի «Արարատը» հուլիսի 15-ից գտնվում էր Թբիլիսիում, որտեղ անցկացնելու է 10-օրյա ուսումնամարզական հավաք: Վրաստանում հայկական ակումբը տեղի թիմերի հետ 3 ընկերական հանդիպում կանցկացնի:

Առաջին հանդիպմանը երեւանցիները՝ 1:2 հաշվով պարտություն կրեցին Թբիլիսիի «Սպարտակ»-ի հետ անցկացրած խաղում:

### ԱՐԾԱԹԵ ՄԵԴԱԼՆԵՐ՝ ԼՈՂԱՓՆՅԱ ՎՈԼԵՅԲՈԼԻ ՄԱՐԶԱՁԵՎՈՒՄ

Լողափնյա վոլեյբոլի Հայաստանի աղջիկների թիմը նվաճել է Բաթումիում ավարտված միջազգային մրցաշարի արծաթե մեդալները:

Հայ մարզուհիներ Անի Ստեփանյանը եւ Անի Հովսեփյանը, եզրափակիչ փուլում՝ 0:2 հաշվով զիջել են Թբիլիսիի թիմին:

Մինչ այդ, Հայաստանի վոլեյբոլիստուհիները՝ 2:0 հաշվով հաղթել են Բոլնիսիի, Քութայիսիի, Բաթումիի թիմերին եւ Թբիլիսիի երկրորդ թիմին:

Հայաստանի լողափնյա վոլեյբոլիստուհիներն առաջիկայում կմասնակցեն նաեւ այլ միջազգային մրցումներում:

Նինոծմինդայից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավորը եւ նրա բյուրոն, Նինոծմինդայի մունիցիպալիտետի սակրեբուլոն եւ վարչությունը խոր ցավակցություն են հայտնում սակրեբուլոյի նախագահ Սմբատ Կյուրեղյանին՝ նրա քրոջ դստեր, ավտովթարում զոհված, 12-ամյա



***Էմիլյա (Էլմիրա) Առուշանի ԹԱԶԱՅԱՆԻ***

անժամանակ մահվան կապակցությամբ:

«Վրաստան» թերթի խմբագրությունը Նինոծմինդայի սակրեբուլոյի նախագահ Սմբատ Կյուրեղյանին խորապես ցավակցում է նրա քրոջ դստեր՝

***Էլմիրա ԹԱԶԱՅԱՆԻ***

ողբերգական մահվան կապակցությամբ:



## ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Հրահեղուկ զանգված: 6.Երկրաչափական մարմին: 9.Վաճառք: 10Խոտակեր անասուններին բնորոշ հատկություն: 12.Շշի փականը: 13.Հրացանի, ատրճանակի լիցքը: 17.«Երկիրը ... զավակին է փայփայում մոր պես» (Զիվանի): 20.Զկան, բադրիջանի ...: 21.Կոմպոզիտոր, երաժշտագետ: 23.Անտառի ծառաշատ, անարեւ, խոնավ մասը: 25.Համաշխարհային կրոններից: 28.Շաքարի գործարան Վրաստանում: 30.Նիշ, միավոր: 33.Անկողնու գլխավերեւի մասը: 35.Լեռան մաս: 36.Հայկական ճաշատեսակ, որն ամեն տարի տոնում է Վրաստանի հայ կանանց «Շուշանիկ» միությունը: 37.«..., տեսա, հաղթեցի»: 38.Արեգակ, արփի: 39.... լիցք: 42.Թատրոնի, կինոյի, ավտոբուսի ...: 44.Եվս, դարձյալ: 46.Գլխի ոսկոր: 47.Տատիկի գործիք: 49.Գետ Հայաստանում: 50.Արեգակնային համակարգի մոլորակ: 52.... ու վանկ: 55.Փարվանա, Ռիծա, Տաբածղուրի: 57.«Որսկան էի, դարձա ...» (Շիրազ): 59.Մասիս, Արագած, Մախաթի: 60.Հյուսնի գործիք: 62.Երգչուհի ... Եգանյան: 63.Ֆիդել ...: 64.Համադասական շաղկապ: 65.Եզր, ծայր, սահման (բրբ.):

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.«...ն ուսին, ճանճը պոզին, մի իրիկուն, գալիս էր տուն» (Ա.Խնկոյան): 3.Խորը քուն: 4.Հայաստանի Գավառի գյուղերից: 7.Ուսումնական հաստատություն: 8.Ֆրանսահայ հայտնի նկարիչ Արշիլ ...: 11.Երգչուհի ... Վայկուլե: 14.Կլոր տասնյակ: 15.Հովեկ, զբոսաշրջիկ: 16.«Բարձր»-ի հականիշը: 18.Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի նախկին դերասան ... Սոսյան: 19.Համադասական զատող շաղկապ: 22....Կրեդիտ Ագրիկոլբանկ: 24.Առարկայի ...ն: 26.Ա.Ս.Պուշկին «...»: 27.... Վրաստանի խորհրդարանի մոտ: 28.Առանց հետքի: 29.Զգացում, հուզում: 31.Ոմն. ... մեկը: 32.Սպայի ուսերին: 34.Սեղանի խաղ: 40.Հովհ.Թումանյան «... մարդը»: 41.Առանց խնայելու, անգթորեն: 43.Սկուտեղ (բրբ.): 45.Կարճ, համառոտ: 48.Կղզի Վանա լճում: 50.Ծովափնյա քաղաք Վրաստանում: 51.Դերասանուհի ... Մոն: 53.Հայկական գաղտնի բանակ: 54.... Գարբո: 54.Պարարտ խոզի «հարստությունը»: 58.Թղթախաղի տեսակ: 61.Կույր, անակն (բրբ.):

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Սպասելիք: 7.Պղինձ: 8.Համազարկ: 11.Իսահակ: 15.Տատ: 17.Գենետիկա: 19.Զինակիր: 21.Կակա: 22.Ադամո: 25.Ռումիներեն: 27.Ռանդա: 28.Պանասոնիկ: 33.Բլբլան: 34.Վանեսա: 35.Նիշ: 36.Տուժա: 37.Հոդված: 40.Կաֆե: 41.Նարկոզ: 42.Թամարա: 45.Լեզու: 46.Աբաս: 47.Քանդակ: 48.Մոցարտ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Պլաստիկ: 3.Սպարտակ: 4.Իբր: 5.Աղքատ: 6.Գնդակ: 9.Այգի: 10.Կին: 12.Սեղան: 13.Հիմար: 14.Կանոն: 16.Անասնաբուժարան: 18.Երամ: 20.Կառապան: 23.Դելոն: 24.Մետիս: 26.Իրավ: 27.Ռոբ: 29.Անիրազեկ: 30.Սարո: 31.Ներվ: 32.Կայծ: 36.Տանիք: 37.Հեքում: 38.Դիմաց: 39.Ագրար: 40.Կոլա: 43.Աբա: 44.Աստ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445